

զըրութիւնները միաժամանակ թէ ուսումնասիրութիւններ և թէ ժողովրդի ընթերցանութեան համար վէպի պէս հետաքրքրական գրուածքներ, Լէօն քաջ գիտէնալով որ ամեն գործիչ ծընունդ է իր ժամանակի և միջնավայրի, լաւ հասկանալով որ տեղական, ազգային պայմանները չի կարելի կղզիացնել, կըտրել նոյն ժամանակի համամարդկային կեանքից—չի բաւականանում կենսագրութիւն գրելիս այս կամ այն գործիչի կեանքի անհատական գծերով, այլ հարցին նայում է աւելի լայն տեսակէտով. նա նախ տալիս է որոշ էպօխայի ընդհանուր գրական-հասարակական-քաղաքական ֆօնը, ապա այդ ֆօնի վրայ նկարում է հայկական միջնավայրի պատկերը և դրա մէջ տալիս է այս կամ այն գործիչի բնորոշ գէմքը իր մանրամասն գծերով:

Այդ գէմքը նկարագրելու համար Լէօն սպունգի պէս ծրծում է մեր գրականութեան մէջ եղած բոլոր նիւթերը, ուշադրութիւնից բաց չը թողնելով նոյն իսկ ամենաչնչին նկատողութիւններ, Ծծելով բոլոր նիւթերը իր ահագին յիշողութեան մէջ նա ապա մեծ սիրով և աշխտօով ցիր ու ցան կտորնեւրից մի գեղեցիկ ամբողջութիւն է ստեղծում: Ընթերցողի առաջ դրած է լինում ոչ այս կամ այն գործիչի լոկ պատկերը, առանձին վերջրած, այլ մի գէմք նկարած որոշ էպօխը բնորոշող ֆօնի վրայ և ազգային կեանքի ժանրի մէջ...

Մի տեղ*) այսպէս է ձեւակերպում հեղինակը իր նպատակը. «Մեր ժողովուրդը—եւ ամենից առաջ նրան եմ աչքի առջև ունեցել—ուշինչ չը գիտէ իր անցեալի մասին, Իմ ուժերիս ներածին չափ օգնել նրան մի մատչելի, կենդանի կերպով պատմուած գործով—այս էր իմ ամբողջ ձգտումը»:

Այդ ձգտումը իրագործուած կարելի է համարել, որովհետեւ Լէօն հրատարակած գրքերը լաւ տարածւում են մեր ժողովրդի մէջ. մի փաստ որ ինքն ըստ ինքեան արդէն պերճախօս է...

Լ. Ս.

25) Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ, Երեսասարգութիւն եւ Ծեռութիւն, Պետերբուրգ, 1902 թ., գինն է 15 կոպ.

Հեղինակի լոյս տեսած աշխատութիւնների թիւը հասնում է այս բրօշուրով 22-ի. մի պատկառելի հրատարակչական ձեռնարկութիւն! Բժ. Բուդուղեանի գրելու ձեւը աւելի հրապա-

*) Հայկական Տպագրութիւն, Ա. հատոր:

րակախօսական-քարոզչական է, քսն ժողովրդական-գիտական Աֆօրիզմները, յորդորները, կշտամբանքը, խրատները բռնում են նրա բրօշիւրների բովանդակութեան գլխաւոր մասը, իսկ խնդրի զուտ բժշկական-առողջապահական կողմին, համեմատաբար, երկրորդական տեղն է տրուում Այնքան ողբան մարդկանց առողջապահական դրութիւնը կախուած է անհատական ինքնօգնութիւնից, յորդորներից և խրատների իրազօրծումից, — անշուշտ քարոզը կ'ունենայ որոշ բարերար ազդեցութիւն. սակայն, տարախտաբար, մարդկանց առողջութիւնը կախուած է նաև բազմաթիւ տնտեսական-հասարակական պայմաններից, որոնք մինչև որ արմատական փոփոխութեան չենթարկուին՝ զատ-զատ գործադրած ջանքերը միայն չնչին, պալլիատիւ նշանակութիւն կարող են ունենալ: Այդ վերջին տեսակէտն էլ, երբեմն, շոշափում է իր բրօշիւրներում և յարգելի հեղինակը:

Մեզ թւում է սակայն որ այսպիսի գրուածքներում պէտք է ողբան հնարաւոր է քարոզչական կողմը քիչ տեղ բռնի և աւելի ոյժ տրուի հարցերի գիտական-փաստական կողմերին: Նոյնը կ'ասենք և այս գրքի մասին:

Բն.

26) Գ. ՇԷՐՄԵՆ, Սրբավայրեր, տեղագրութիւն Վասպուրականի նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից և ուսումնարանաց, Թիֆլիս, 1901 թ., գինն է 40 կ.

Հեղինակը, որ յայտնի է և իր «Վանայ Սագ» աշխատութիւնով և ընդ Վասպուրականից է, նկարագրում է իր հայրենի վանքերը, եկեղեցիները և, շատ աննշան չափով, յիշում է և մի երկու ուսումնարանների մասին: Եթէ դուք թերթէք Պօլսի հրատարակութիւնները՝ այնտեղ ևս համարեա ամեն քայլափոխում կը գտնէք Փոքր-Ասիայի և Թիւրքաց Հայաստանի զանազան տեղերում յիր ու ջան տարածուած հայոց վանքերի և եկեղեցիների նկարագրութիւնները: Ասենք, տաճկական գրաքննիչների համար արդէն «ազգային» խօսքն էլ մի ծանր քաղաքական յանցանք է, ուստի զարմանալի չէ երբ սուլթանի բէժիմի տակ հայ մարդիկ բացի վարդապետներից, տէրտէրներից, վանքերից և եկեղեցիներից և սուլթանի սալամլիքների նկարագրիչներից, ներքին կեանքի որ և է ազգային խնդրի մասին անկարող են կարծիք յայտնել. սակայն անհասկանալի է, երբ կոմկատում ևս տաճկաստանցին մի ամբողջ գիրք է հրատարակում նուիրած